ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/32

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.03.2018թ. թիվ 03/26-3/5752-18 գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02555635) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1030 գրության հիման վրա, 29.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մեդիսար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1030 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում առաջին չափաբաժնի մասով «Մեդիսար» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 06.03.2018թ. սահմանված կարգով «Մեդիսար» ՍՊԸ-ն armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերոնշյալ չափաբաժնի մասով ապրանքի տեխնիկական բնութագրերի քննարկման արդյունքում պարզվեց, որ նրանք տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն, որով մասնակիցը առաջարկում է նիստը տեղափոխել 21.03.2018թ.: Քանի որ հրավերով նման բան սահմանված չէ, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց առաջին չափաբաժնի մասով «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **«Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Խորհուրդը դիմել է «Մեդիսար» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.03.2018թ. թիվ 03/26-3/5752-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Մեդիսար» ՍՊԸ-ի տնօրեն Մանվել Գաբրիելյանը և Ընկերության լիազորված ներկայացուցիչ Աննա Մարգարյանը:

4. **ՍՑ-ԷՍ-2018/32 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.03.2018թ. թիվ 03/26-3/5752-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 26.03.2018թ. թիվ ԴՎԱ/1030 գրությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 05.03.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 և 16.03.2018թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից 17.03.2018թ. Պատվիրատուին ուղղված գրությունը, Պատվիրատուի կողմից 06.03.2018թ. «Մեդիսար» ՍՊԸ-ին ուղղված ծանուցումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ ծծմբական թթու, թթվածին, մետաղական խոզանակների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Մեդիսար» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

• N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 05.03.2018թ. ժամը 11:30 նիստի թիվ 3 արձանագրության՝

- 2.3 կետով «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերը գնահատել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

- 4.1 կետով որոշել է՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեդիսար» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցին՝ առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 06.03.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Մեդիսար» ՍՊԸ-ն ծանուցվել է:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նշված ապրանքատեսակի՝ ծծմբական թթվի համար պահանջվել են հետևյալ տեխնիկական հատկանիշները՝ Քիմիական բաղադրությունը H2SO4, Խտությունը 1.83 գ/սմ3-ից ոչ ցածր, Մնացորդ շիկացումից հետո % 0.03,Երկաթ (Fe), ոչ ավել %0.006, Ազոտի թթվուկներ (N2O3), ոչ ավել % 0.00005, Զառիկ (As), ոչ ավել %0.00005,Քլորային միացություններ (Cl), ոչ ավել %0.0003, Մանգան (Mn), ոչ ավել % 0.00005, Ծանր մետաղների գումարային քանակությունը՝ կապարի վերահաշված, ոչ ավել % 0.01, Պղինձ (Cu), ոչ ավել % 0.00005,Մանգանաթթու կալիումը վերականգնող նյութերի, մլ 0,01 և KMnO4(O) լուծույթի պարունակությունը, ոչ ավել 4.5, Փաթեթավորում՝ 20-30լ տարողությամբ ապակյա շշերում, համաձայն ԳՈՍ 14182-69:

Ընկերությունը N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ հետևյալ բովանդակությամբ.

- 1-ին չափաբաժին՝ անվանումը՝ Ծծմբական թթու, արտադրողի անվանումը՝ Թիզաբ, ծագման երկիրը՝ Իրան, տեխնիկական բնութագիրը՝ Քիմիական բաղադրությունը՝ H2SO4, Խտությունը 1.83 գ/սմ^3-ից ոչ ցածր, Ծծմբի օքսիդ՝ (SO_2) – 0,0025% ոչ ավել, Երկաթ (Fe) – 0,00.35% ոչ ավել, Ծանր մետաղների գումարային քանակությունը՝ կապարի վերահաշված 0,0037% ոչ ավել, Արսեն (As), սնդիկ (Hg) – 0,0% ոչ ավել, 20լ. Տարողությամբ պոլիեթիլային տարրաներում:

Հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 16:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում են՝ Ստանդարտ ԳՈՍ 667-73, Մնացորդ շիկացումից հետո 0.03%, Ազոտի թթվուկներ 0.00005% ոչ ավել, Քլորային միացություններ 0.0003% ոչ ավել, Պզինձ (Cu) 0.00005% ոչ ավել, Մանգան (Mn) 0.00005% ոչ ավել, Մանգանաթթու կալիումը վերականգնող նյութերի, մլ 0,01 և KMnO4(O) լուծույթի պարունակությունը 4.5% ոչ ավել, նշված չէ նաև արտադրման տարեթիվը և Հրավերով սահմանված է՝ փաթեթավորում ապակյա կամ պլաստմասե տարրաներով, իսկ Ընկերության ներկայացված

փաստաթղթերում լրացված է պոլիէթիլային տարրաներում, նշված անհամապատասխանությունները շտկելու համար, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև ժամկետի ավարտը շտկել տեղ գտած անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը արձանագրել է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, որով խնդրել է նիստը տեղափոխել 21.03.2018թ.:

Հանձնաժողովը 19.03.2018թ. որոշել է մերժել «Մեդիսար» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Խորհրդի անդամին հայտնեց, որ ներկայացված ծծմբական թթուն պարսկական արտադրության է և քանի որ որոշակի տվյալներ պարսկական ԳՈՍՏ-ում չեն նշվում, Ընկերությունը 17.03.2018թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին խնդրելով նիստը տեղափոխել 21.03.2018թ., որպեսզի ծծմբական թթվի նմուշը տրվի փորձագիտական լաբորատորիա տեխնիկական չափորոշիչները ճշտելու համար և հավելեց, որ ըստ «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի փորձարկումների արդյունքի Ընկերության կողմից ներկայացված ծծմբական թթուն մի կարգ բարձր է Հրավերով պահանջված ծծմբական թթվից:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդի անդամի այն հարցին, թե ինչ՞ու արտադրման տարեթիվը Ընկերության կողմից չի նշվել, Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ ծծմբական թթուն անժամկետ է և այն պիտանելիության ժամկետ չունի:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Խորհրդի անդամը պահանջեց, որ Ընկերությունը Խորհրդին, ինչպես նաև Պատվիրատուին ներկայացնի Հրավերով պահանջված և Ընկերության կողմից ներկայացված ծծմբական թթվի տեխնիկական հատկանիշների համեմատական աղյուսակ:

Ընկերության կողմից ներկայացվեց հետևյալ համեմատական աղյուսակը.

Ցուցանիշի անվանումը	Պահանջվող ցուցանիշ	Արտադրվող	Գործարանի

	համաձայն Գոստի	գործարանի արդյունքը	սերտիֆիկատում բացակայող ցուցանիշները ստացված փորձարկումների արդյունքում
Պղինձ (Cu)	0.00005 % ոչ ավել	0.00005 %	0.00000593 % ԻՍՕ 17294-2-2003
Մանգան (Mn)	0.00005 % ոչ ավել	0.00004 %	0.00003125 % ԻՍՕ 17294-2-2003
Մնացորդ շիկացումից հետո	0.03 %	0.0	0.026 % ԳՈՍ 18995,1-73
Քլորային միացություններ	0.0003 % ոչ ավել	0.00004 %	<0.0001 % ԳՈՍ 667-73
Ազոտի թթվուկներ	0.00005 % ոչ ավել	0.0003 %	-
Մանգանաթթու կալիումը վերականգնող նյութերի, մլ 0,01 և KMnO4(0) լուծույթի պարունակությունը	4.5 % ոչ ավել	-	-

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Մանգանաթթու կալիումը վերականգնող նյութերի, մլ 0,01 և KMnO4(0) լուծույթի պարունակությունը «Ստանդարտ Դիալոգ» և «Թիզաբ Ազար Արաս» սահմանափակ պատասխանավությամբ ընկերությունների կողմից անալիզի չի ենթարկվում, ինչպես նաև հայտնեց, որ նշված ապրանքը ապակյա տարրաներով չի մատակարարվում, այն մատակարարվում է պլաստմասե տարրաներով, որի հիմքը կազմում են պոլիմերները, իսկ պոլիէթիլենը պլաստմասի մաս է, հետևաբար Ընկերության կողմից նշված պոլիէթիլեյային տարրան, նույն պլաստմասե տարրան է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք)

• 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 13-րդ հոդվածի՝ 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

• 13-րդ հոդվածի՝ 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

• 13-րդ հոդվածի՝ 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ

արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդն արձանագրում է, որ.

• Ընկերության կողմից ներկայացված փորձագիտական արդյունքների և համամետական աղյուսակի համաձայն, ծծմբական թթվի տեխնիկական հատկանիշները համապատասխանում են Հրավերով պահանջված տեխնիկական հատկանիշների պահանջներին:

• Ներկայացված ծծմբական թթվի արտադրման տարեթիվը բացակայում է, քանի որ տվյալ ապրանքատեսակը պիտանելիության ժամկետ չունի:

Խորհուրդն արձանագրում է, նաև, որ, Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերի ժամանակ Ընկերության կողմից ներկայացված առարկությունները և ապացույցներն ուղարկվել են Պատվիրատուին, սակայն Ընկերության կողմից ներկայացված ապացույցների և առարկությունների վերաբերյալ Պատվիրատուն որևէ դիրքորոշում չի ներկայացրելը, ինչպես նաև Պատվիրատուի կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել Խորհրդի նիստերին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի նկարագիրը և դրա տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.03.2018թ. գրությամբ «Մեդիսար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ